/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ռուսաստանի Դաշնություն/Սանկտ Պետերբուրգ/12.09 – 14.09.2018 թ.

- **Նպատակը**

Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների մշտադիտարկման համար վիճակագրական կարողությունների բարելավում» խորագրով միջազգային սեմինար և Կայուն զարգացման նպատակների վիճակագրության գծով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կառավարող խմբի հանդիպում

- **Քննարկված թեմաները**

2018 թ. սեպտեմբերի 12-ին կայացած «Կայուն զարգացման նպատակների մշտադիտարկման համար վիճակագրական կարողությունների բարելավում» խորագրով միջազգային սեմինարի նպատակն էր քննարկել Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) մշտադիտարկման հարցերը գլոբալ և տարածաշրջանային մակարդակներով, ԱՊՀ երկրներում կայուն զարգացման ցուցանիշների մշտադիտարկման աշխատանքների զարգացումը, ինչպես նաև ԿԶՆ-ի վիճակագրական տվյալների հիմնական սպառողների փոխազդեցության ու հաղորդակցման հարցերը:

Սեմինարին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

Ողջույնի խոսք և սեմինարի բացում

- Ս. Ն. Եկորենգո, Պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ
- Լիդիա Բրատանովա, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժնի տնօրեն
- Վլադիմիր Սոկոլին, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահ
- Նստաշրջան 1. ԿԶՆ-ի մշտադիտարկման ոլորտում վերջին նվաճումները գլոբալ և տարածաշրջանային մակարդակներով

Մոդերատոր՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը գլոբալ մակարդակով, ԿԶՆ-ի ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի համանախագահ

- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը ԱՊՀ տարածաշրջանում, ԱՊՀ վիճակագրական կոմիտե
- Համաշխարհային բանկի առանձին նախաձեռնությունները ԿԶՆ-ի գծով, Համաշխարհային Բանկ

Նստաշրջան 2. ԿԶՆ-ի ազգային ցուցանիշների հավաքածուները և վիճակագրության մշակման ճանապարհային քարտեզները ԿԶՆ-ի համար

Մոդերատոր՝ ԱՊՀ վիճակագրական կոմիտե

- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը Ղազախստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետության վիճակագրության գործակալություն
- ԿԶՆ-ի մշտադիտարկման համակարգի ներդրումը Ղրղզստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե
- ԿԶՆ-ի ցուցանիշների ազգային հավաքածուի մշակումը, Մոլդովայի Հանրապետության վիճակագրության ազգային բյուրո

Նստաշրջան 3. Ազգային հաշվետվողականության հարթակները ԿԶՆ-ի համար: Տվյալների հոսքերը գլոբալ և տարածաշրջանային մակարդակներով: Վիճակագրական Տվյալների և Մեթատվյալների Փոխանակում (SDMX) ստանդարտի իրականացումն ազգային մակարդակով: Վիճակագրության հաղորդակցումը ԿԶՆ-ի համար

Մոդերատոր՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

- Ազգային հաշվետվողականության հարթակը ԿԶՆ-ի համար. Հայաստանի Հանրապետության փորձը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը Բելառուսի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե
- ԿԶՆ-ի ազգային հաշվետվողականության հարթակի առանձնահատկությունները Ադրբեջանի Հանրապետությունում, Ադրբեջանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների մշտադիտարկումը Ռուսաստանի Դաշնությունում, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայություն
- ԿԶՆ-ի ազգային մշտադիտարկումը՝ առաջընթացը ԿԶՆ-ի գործարկումից հետո: Մեքսիկայի փորձը, Մեքսիկայի տնտեսագիտության և աշխարհագրության ազգային ինստիտուտ
- Վիճակագրության հաղորդակցումը ԿԶՆ-ի համար Մեծ Բրիտանիայում, Մեծ Բրիտանիայի ազգային վիճակագրության համար գրասենյակ
- Արդյունքների ամփոփում և հաջորդ քայլերը:

2018 թ. սեպտեմբերի 13-14-ը կայացած Կայուն զարգացման նպատակների վիճակագրության գծով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կառավարող խմբի հանդիպմանը քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Ողջույնի խոսք և բացում՝ Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայություն, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
2. Արդիականացումներ ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի ԿԶՆ-ի խմբերից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

- Գործընկերության, համակարգման և ներուժի կառուցման բարձր մակարդակի խումբ, Բարձր մակարդակի քաղաքական ֆորում
- Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խումբ
- Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի հանդիպում, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Բյուրո
- Քննարկում

3. Կառավարող խմբի առաջընթացն ու առաջնահերթությունները

- 2018 թ. փորձագիտական հանդիպման ժամանակ սահմանված գործողությունների հարցերը

4. ԿԶՆ-ի տվյալների հոսքերը

- Տվյալների հոսքի երկրորդ փորձնական ուսումնասիրության նախնական արդյունքները
- Քննարկում
- Հաջորդ քայլերը և այլ գործողություններ
- Խմբային քննարկում ազգային հաշվետվողականության հարթակներով կամ այլ տվյալների բազաներով տվյալների հոսքերի ավտոմատացման վերաբերյալ
- Հաշվետվողականության վրա կենտրոնացող ազգային հաշվետվողականության հարթակի երկրի օրինակը
- Հաղորդակցման վրա կենտրոնացող ազգային հաշվետվողականության հարթակի երկրի օրինակը

5. Ազգային հաշվետվողականության հարթակներ

- Նախնական զեկույցի ներկայացում

6. Վիճակագրական ներուժի զարգացում ԿԶՆ-ի համար

- Տեխնիկական առաջադրանքի և ժամանակացույցի ներկայացում
- Սահմանված գործողությունների քննարկում
- Հաջորդ քայլերը
- Հետագա աշխատանքի վերաբերյալ խմբային քննարկում
- Հաշվետվություն խմբերից և քննարակում
- Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավարի նկատառումները

7. Վիճակագրության հաղորդակցում ԿԶՆ-ի համար

- Սպառողների ներգրավում, ազգային վիճակագրության պատմությունների ներկայացում
- Լավագույն փորձառությունները կամավորական ազգային զեկույցի վիճակագրական հավելվածների պատրաստման ընթացքում
- Գործնական առաջարկություններ ԿԶՆ-ի վիճակագրության հաղորդակցման մեջ.
  - Հաղորդակցման վերաբերյալ հարցաթերթի արդյունքները
  - Տերմինների բառարանի նախագիծը
- Տվյալների սպառողների պրոֆիլների և պատմագրության համացանկի նախագիծը
- Քննարկում և հաջորդ քայլերը

8. Հաջորդ քայլերը Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի ճանապարհային քարտեզի հետ

- Նպատակները, հնարավոր մոտեցումներն ու հնարավոր բովանդակությունը
- Քննարկում և հաջորդ քայլերը

9. ԿԶՆ-ի վիճակագրության գծով փորձագիտական հանդիպում 2019 թ. ապրիլին Հանդիպման նպատակները, առաջարկվող օրակարգը

- Հանդիպման նախապատրաստումն ու քաղված դասերը
- Քննարկում և հաջորդ քայլերը

10. Եզրակացություններ

- Գործողությունների կետերի և հանձնարարությունների ամփոփում
- Հաջորդ քայլերն ու հետագա հանդիպումները
- Հանդիպման փակում:

Հանդիսանալով 2017թ. ստեղծված ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի անդամ, ՀՀ ՎԿ-ի կողմից ԿԶՆ-ի ցուցանիշների գծով գործունեության համակարգող և ՀՀ ՎԿ-ի կողմից մշակված Հայաստանի ԿԶՆ-ի ցուցանիշների Ազգային հաշվետվողականության հարթակի համահեղինակ՝ ներկայացրել եմ «Ազգային հաշվետվողականության հարթակը ԿԶՆ-ի համար. Հայաստանի Հանրապետության փորձը» խորագրով շնորհանդես միջազգային սեմինարի «Նստաշրջան 3. Ազգային հաշվետվողականության հարթակները ԿԶՆ-ի համար, տվյալների հոսքերը գլոբալ և տարածաշրջանային մակարդակներով, Վիճակագրական Տվյալների և Մեթատվյալների Փոխանակում (SDMX) ստանդարտի ներդրումը: Փոխազդեցությունն ու հաղորդակցումը ԿԶՆ-ի ոլորտում» թեմայի ներքո:

- **Արդյունքները**

Մասնակցությունը հանդիպումներին հնարավորություն ընձեռեց փոխանակվելու գաղափարներով, տեղեկատվությամբ և փորձառությամբ, ուսումնասիրելու նշյալ որորտում վերջին զարգացումները և այլ երկրների փորձերը, քննարկելու Կայուն զարգացման նպատակների վիճակագրության հաշվետվողականության և հաղորդակցման ռազմավարությունները, գործողությունների իրականացման ճանապարհային քարտեզը, առկա մարտահրավերները և խնդիրները, ինչպես նաև Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների ազգային և գլոբալ մշտադիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական ներուժի ամրապնդման գործողությունները:

- **Նշումներ**

Հանդիպումների ընթացքում տեղի ունեցան բանակցություններ և քննարկումներ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչ տիկին Ջենիֆեր Պարկի հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ Ազգային հաշվետվողականության հարթակի կատարելագործման և Վիճակագրական Տվյալների և Մեթատվյալների Փոխանակում (SDMX) ստանդարտի ներդրման ուղղությամբ, մասնավորապես, ՀՀ ՎԿ-ի մասնակցության վերաբերյալ փորձնական ծրագրում որպես օրինակելի երկիր, որն այնուհետ կտարածվի տարածաշրջանի այլ երկրներում: Հաշվի առնելով առաջարկի կարևորությունը Հայաստանի վիճակագրության հետագա զարգացման համար՝ ՀՀ ՎԿ-ն արտահայտեց իր պատրաստակամությունը և ներկայացրեց դրական պատասխան փորձնական ծրագրում մասնակցության վերաբերյալ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյան